ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 95-Լ

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՂ ԲԱՂԱԴՐԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒԺԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 1373 ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 609-Լ ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև «Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» 2015 թվականի մայիսի 19-ի համաձայնագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի (այսուհետ՝ ՌՀՄԱԿ) արձագանքող բաղադրիչ հանդիսացող ուժերի ռեեստրը (այսուհետ՝ Ռեեստր)՝ համաձայն հավելվածի:

2. ՌՀՄԱԿ տնօրենին, ՌՀՄԱԿ ռեեստրում ընգրկված ստորաբաժանումների ղեկավարներին՝

1) ապահովել ՌՀՄԱԿ ռեեստրում ընդգրկված ստորաբաժանումների անձնակազմի մշտական պատրաստությունը Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և երրորդ պետությունների տարածքներում ՌՀՄԱԿ կազմում մարդասիրական արձագանքում իրականացնելու նպատակով,

2) ՀՀ ներքին գործերի նախարարից մարդասիրական արձագանքում իրականացնելու հրաման ստանալու դեպքում ապահովել ՌՀՄԱԿ ռեեստրում ընդգրկված անձնակազմի և տեխնիկայի ժամանումը ՌՀՄԱԿ տնօրինության կողմից սահմանված հավաքի վայր՝ սահմանված ժամկետում, անհրաժեշտ հանդերձանքով, հատուկ տեխնիկայով ու սարքավորումներով:

3. Մարդասիրական արձագանքման իրականացման ընթացքում ՌՀՄԱԿ կազմում արձագանքող ուժերն անցնում են ՌՀՄԱԿ վարչության օպերատիվ ենթակայության տակ:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն-Ներքին գործերի նախարարի տեղակալ, ՌՀՄԱԿ վարչության համանախագահին:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի նոյեմբերի 13-ի N 1373 և 2019 թվականի հունիսի 24-ի N 609-Լ հրամանները:

6. Հրամանը ծանոթացնել ՀՀ ՆԳՆ իրավասու ստորաբաժանումների ծառայողներին և աշխատողներին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ 24.12.2024թ.

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ՆԳՆ 24.12. 2024թ.
№ 95-Լ հրամանի

ՌԵԵՍՏՐ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՂ ԲԱՂԱԴՐԻՉ ԿԱԶՄՈՂ ՈՒԺԵՐԻ

Հ/Հ	ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանման անվանումը	Անձնա-կազմիք անակը	Նշումներ
1.	ՀՀ ՆԳՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչություն	40	Ընդգրկված է ՀՀ ՆԳՆ ՓԾ ՓՈՒՎ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնը
2.	ՀՀ ՆԳՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչություն	30	Այդ թվում ընդգրկված է նաև ՀՀ ՆԳՆ ՓԾ ՔՊՎ քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնը և Կենտրոնի հիմքի վրա ծավալված ՀԱԷԿ-ի վթարի դեպքում ՃՔԿ մոնիթորիգի 2 խումբ(6 հոգի)
3.	ՀՀ ՆԳՆ ՓԾ բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչություն	6	
4.	ՀՀ ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն	3	
5.	ՀՀ ՆԳՆ ՓԾ բժշկական ապահովման վարչություն	6	
6.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչություն	50	
7.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն	20	
8.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչություն	20	
9.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչություն	20	

10.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչություն	20	
11.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչություն	40	Այդ թվում ընդգրկված է նաև ներքին որակավորում անցած Սյունիքի մարզային ՔՈՓ թիմը և մարզային ՃՔ արձագանքման թիմը
12.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչություն	40	Այդ թվում ընդգրկված է նաև ներքին որակավորում անցած Շիրակի մարզային ՔՈՓ թիմը և մարզային ՃՔ արձագանքման թիմը
13.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչություն	40	Այդ թվում ընդգրկված է նաև ներքին որակավորում անցած Լոռու մարզային ՔՈՓ թիմը և մարզային ՃՔ արձագանքման թիմը
14.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչություն	40	Այդ թվում ընդգրկված է նաև ներքին որակավորում անցած Տավուշի մարզային ՔՈՓ թիմը և մարզային ՃՔ արձագանքման թիմը
15.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչություն	20	
16.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունքի մարզային փրկարարական վարչություն	25	Այդ թվում ընդգրկված է նաև ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ հատուկ ջրափրակարարական ջոկատը
17.	ՀՀ ՆԳՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչություն	9	
18.	ՀՀ ՆԳՆ ՓԾ օպերատիվ կառավարման վարչություն	3	
19.	ՀՀ ՆԳՆ «Սեյսմիկ պաշտպանությանտարածքային ծառայության » ՊՈԱԿ	5	
Ընդամենը		**437**	